37	Համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ	1	110000	110000
38	Համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ	1	110000	110000
39	Համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ	1	110000	110000
40	Համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ	1	110000	110000
ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՐՆԵՐ				
41	Ջրակարգավորող՝ Աղնջաձոր՝ 1դրույք, Արտաբույնք՝ 1դրույք, Եղեգիս՝ 1դրույք, Քարազուխ՝ 1դրույք, Թառաթումբ՝ 0,6 դրույք, Հորս՝ 0,6 դրույք, Շատին՝ 1 դրույք	6,2	95625	592875
42	Ջրակարգավորող՝ Հորքատեղ՝ 0,5 դրույք	0,5	104000	52000
43	բանվոր՝ Շատին՝ 0,5, Շատին՝ 0,5	1	97500	97500
44	անասնաբույժ	7	110000	770000
45	բնապահական	1	200000	200000
46	բնապահական	2	170000	340000
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍՏՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				

47	Գործավար՝ Շատին 1դրույք.	1	150000	150000
48	Գործավար խմբակցության	0,5	104000	52000
49	գործավար խմբակցության	0,5	104000	52000
50	վարորդ	1	104000	104000
51	պահակ Շատին	1	95625	95625
52	Հավաքարար՝ Աղեջածոր՝ 0,5 դրույք, Արտարույն՝ 0,5 դրույք, Եղեգիս՝ 0,5 դրույք, Հորբատեղ՝ 0,5 դրույք, Սալլի՝ 0,5 դրույք, Հորս՝ 0,5 դրույք	3	97500	292500
53	Հավաքարար՝ Թառաթումբ՝ 0,6 դրույք, Շատին՝ 1 դրույք, Քարագլուխ՝ 0,5 Վարդահովիտ՝ 0,5 դրույք, Գողթանիկ՝ 0,5 դրույք, Հերմոն՝ 0,5 դրույք.	3,6	104000	374400
Ընդամենը		68,3		10650900



[Handwritten signature]
 Ա. Մանուկյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ, հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am, էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02-ը փետրվարի 2024 թվականի N 05 Ա

**2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ «ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՈՒՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ԹՎԱՔԱՆԱԿԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջներով,

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Հաստատել 2024թ. համար «Եղեգիսի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի
աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը,
պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

2. Հաստատել 2024թ. համար «Եղեգիսի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի
աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը՝ 9 (ինը):

Կողմ՝ 8

Դեմ՝ 2

Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա **բացակա**
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե **բացակա**
Հարությունյան Կարեն **բացակա**
Միքայելյան Քրիստինա **բացակա**
Ստեփանյան Սաշա **բացակա**

Սմբատյան Մամիկոն
Սմբատյան Արսեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված
Եղեգիս
համայնքի ավագանու
2024թ. 02-ը փետրվարի
թիվ 05Ա որոշման

<<ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ >>

ՀՈԱԿ-ի 2024թ. հասարիքացուցակ

<<ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ >> ՀՈԱԿ			
Հ/Հ	Հասարիքի անվանումը	Հասարիքային միավոր	Դրույքաչափ
1.	Տնօրեն	1	190 000
2.	Պայմանագրերի և գանձումների պատասխանատու-հաշվապահ	1	120 000
3.	Տրակտորիստ (ELAZ-BL880)	1	185000
4.	Տրակտորիստ (JM-1304)	1	170000
5.	Վարորդ (ՄԻԿՐՈԱՎՏՈՐՈՒՄ Գ ԳԱՋ 322173-753)	1	130000
6.	Վարորդ (ՈՒԱՋ 390945-552)	1	125000
7.	Վարորդ (ԿԱՄԱՋ ԻՆՔՆԱԹԱՓ 65 115-6058-50)	1	120000
8.	Էլեկտրիկ	1	104000
9.	բանվոր	1	104000
	Ընդամենը՝	9	1 248 000

Աշխատակիցների թիվը՝ 9 (ինն)



Համայնքի ղեկավար

Արթուր Ստեփանյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց Ձորի մարզ, հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am, էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02-ը փետրվարի 2024 թվականի N 06 Ա

**2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և 28-րդ հոդվածի 1-ին
մասի 3-րդ կետի նպատակներով

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս
համայնքի ղեկավարի վարձատրության չափ սահմանել 540 000 (հինգ հարյուր
քառասուն հազար) ՀՀ դրամ:

Կողմ՝ 8

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 1

Սմբատյան Մամիկոն

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա **բացակա**
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե **բացակա**
Հարությունյան Կարեն **բացակա**
Միքայելյան Քրիստինա **բացակա**
Ստեփանյան Սաշա **բացակա**
Սմբատյան Արսեն **բացակա**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց Ձորի մարզ, հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am, էլ. հասցե՝ shatin.vayotszor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02-ը փետրվարի 2024 թվականի N 07 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի պահանջներով

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի
սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն սույն որոշման 1-
13 հավելվածների:

Կողմ՝ 8

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 1
Սմբատյան Մամիկոն

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա **բացակա**
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե **բացակա**
Հարությունյան Կարեն **բացակա**
Միքայելյան Քրիստինա **բացակա**
Ստեփանյան Սաշա **բացակա**
Սմբատյան Արսեն **բացակա**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐԹՈՒՐ ՍԵՓԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք

ՀՀ Վայոց ձորի մարզ, հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am, էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02-ը փետրվարի 2024 թվականի N 08 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի կառավարման ամենամյա ծրագիրը ստորև ներկայացված տվյալներով՝

1. Համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի օտարում՝
1) Գյուղատնտեսական նշանակության վարելահող՝ 34 հա, խոտհարք՝ 40 հա, այլ հողեր՝ 450 հա:

2) Բնակավայրերի նշանակության հողեր՝ 1,3 հա:

2. Համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի տրամադրում՝

1) Գյուղատնտեսական նշանակության վարելահող՝ 70 հա, խոտհարք՝ 90 հա, արոտ՝ 1000 հա, այլ հողեր՝ 300 հա:

Կողմ՝ 8

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 1
Սմբատյան Մամիկոն

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա **բացակա**
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե **բացակա**
Հարությունյան Կարեն **բացակա**
Միքայելյան Քրիստինե **բացակա**
Ստեփանյան Սարգսյան **բացակա**
Սմբատյան Արսեն **բացակա**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ, հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am, էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02-ը փետրվարի 2024 թվականի N 09 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023-
2027 Թ.Թ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ՝ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ, ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ մասի պահանջներով

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2023-2027թ.թ. հնգամյա զարգացման ծրագրի՝ 2023 թվականի ընթացքում իրականացված ծրագրերի, կատարված աշխատանքների հաշվետվությունը, համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ՝ 8

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 1
Սմբատյան Մամիկոն


Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա **բացակա**
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե **բացակա**
Հարությունյան Կարեն **բացակա**
Միքայելյան Քրիստինա **բացակա**
Ստեփանյան Սաշա **բացակա**
Սմբատյան Արսեն **բացակա**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023-2027Թ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2024
Հունվար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ	4
Աղբահանություն.....	4
2023թ. 1-ին եռամսյակում կատարված աշխատանքները	4
2023թ. 2-րդ եռամսյակում կատարված աշխատանքները	4
2023թ. 3-րդ եռամսյակում կատարված աշխատանքները	7
2023թ. 4-րդ եռամսյակում կատարված աշխատանքները	8
ՍՈՒԲՎԵՆՅՈՒՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ	9
ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆ	9
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ	9

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եղեգիս համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է 2023-2027թթ համար, որը ենթադրում է համայնքի տնտեսական և սոցիալական զարգացում:

Այն մշակվել է հիմք ընդունելով համայնքի բոլոր բնակավայրերում կայացած հանրային լսումները:

Հաշվետվությունը բաղկացած է ըստ եռամսյակներ կատարված աշխատանքներից և համայնքի կապիտալ ձեռքբերումներից 2023 թվականի ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում իրականացված աշխատանքների շնորհիվ գրանցվել են զգալի արդյունքներ, ըստ ոլորտների և ուղղությունների:

Աղբահանություն

Համայնքի Շատին, Վարդահովիտ, Սալլի, Աղնջաձոր, Քարագլուխ, Թառաթումբ, Գողթանիկ, Հերմոն, Հորս, Արտաբույնք, Հորբատեղ, Եղեգիս բնակավայրերում ամեն շաբաթ կատարվել են սանիտարական մաքրման և աղբահանման աշխատանքներ:

2023թ. 1-ին եռամսյակում կատարված աշխատանքները

1. Աղնջաձոր գյուղում կատարվել է վթարված խմելու ջրի հատվածի վերանորոգում:
2. Հերմոն գյուղում կատարվել է վթարված խմելու ջրի հատվածի հետլիցք:
3. Գողթանիկ գյուղի ճանապարհահատվածում կատարվել է առաջացած սառցաշերտի սառցազատում և ճանապարհաեզրի ջրահեռացման առվի փորում:
4. Աղնջաձոր գյուղում կատարվել է վթարված խմելու ջրի վերանորոգում:
5. Շատին-Եղեգիս գյուղերում կատարվել է ճանապարհների աղբի հեռացում:
6. Կատարվել է ձնամաքրման աշխատանքներ Հերմոն, Հորբատեղ, Եղեգիս, Արտաբույնք, Քարագլուխ, Հորս, Սալլի, Գողթանիկ, Վարդահովիտ, Թառաթումբ և Աղնջաձոր գյուղերում:
7. Եղեգիս գյուղում կատարվել է անասնախմոցի տարածքում տեղի հարթեցման աշխատանքներ:
8. Շատին գյուղում կատարվել է ճանապարհի եզրերի երթևեկությանը խոչընդոտող համապատասխան ծառերի էտման աշխատանքներ:
9. Շատին գյուղում կատարվել է գերեզմաններ տանող ճանապարհի հարթեցման աշխատանքներ:
10. Թառաթումբ գյուղում կատարվել է գերեզմանների տարածքում սելաֆատարի կառուցում:
11. Շատին գյուղում կատարվել է «Աշարադուզ» կոչվող տարածքում ճանապարհների բարեկարգման աշխատանքներ:
12. Աղնջաձոր գյուղում կատարվել է հասարակական սեպտահորի փորման աշխատանքներ:

2023թ. 2-րդ եռամսյակում կատարված աշխատանքները

13. Քարագլուխ գյուղում կատարվել է ծառերի ճյուղերի կտրման աշխատանքներ:
14. Սալլի գյուղում կատարվել է ծառերի ճյուղերի կտրման աշխատանքներ:
15. Շատին գյուղում կատարվել է ոռոգման ցանցի նորոգման աշխատանքներ:
16. Շատին գյուղի «Ներքնի գերեզմաններ» կոչվող տարածքում կատարվել է ոռոգման ցանցի նորոգման աշխատանքներ:
17. Շատին գյուղում կատարվել է ոռոգման ցանցի նորոգում «Հոստուն» ջրի առվի լակունքի մաքրման աշխատանքներ:

18. Շատին գյուղի «Աշարադուզ» կոչվող հատվածում կատարվել է ճանապարհի նորոգում:
19. Աղնջաձոր գյուղի համայնքապետարանի՝ հարակից տարածքում կատարվել է հողային աշխատանքներ:
20. Հերմոն գյուղում կատարվել է վթարված ջրագծի վերականգնում և Հերմոն - Գողթանիկ ճանապարհահատվածում կատարվել ժայռի փլվածքի մաքրման, հարթեցման և հեռացման աշխատանքներ:
21. Աղնջաձոր գյուղի «Միջնաձոր» կոչվող տարածքում կատարվել է՝ ոռոգման առվի վնասված հատվածի նորոգման աշխատանքներ:
22. Աղնջաձոր գյուղի «Միջնաձոր» կոչվող տարածքում կատարվել է՝ ոռոգման առվի վնասված հատվածի նորոգման աշխատանքներ:
23. Կատարվել է Հերմոն-Գողթանիկ ճանապարհի բարեկարգման աշխատանքներ:
24. Կատարվել է Հերմոն-Գողթանիկ ճանապարհի բարեկարգման և գոունտի տեղափոխման աշխատանքներ:
25. Հերմոն գյուղում կատարվել է ոռոգման ցանցի նորոգման՝ խողովակի փոխարինման և քարերի հեռացման աշխատանքներ:
26. Գողթանիկ գյուղում կատարվել է գյուղապետարանի սեպտահորի փորման աշխատանքներ:
27. Քարագլուխ գյուղի մարգաղաշտում կատարվել է շինարարական աշխատանքներ:
28. Վարդահովիտ գյուղում կատարվել է ոռոգման ցանցի բարեկարգման և սեպտահորերի փորման աշխատանքներ:
29. Շատին գյուղում կատարվել է՝ հիվանդանոց տանող փողոցի բարեկարգման աշխատանքներ:
30. Աղնջաձոր գյուղում կատարվել է՝ ոռոգման ցանցի բարեկարգման աշխատանքներ:
31. Քարագլուխ գյուղում կատարվել է՝ դրենաժային կանալի փորման և խմելու ջրի վթարված հատվածի վերանորոգման աշխատանքներ:
32. Քարագլուխ գյուղում կատարվել է՝ ֆուտբոլի մարգաղաշտի շինարարության / փորում, հարթեցում, բարձում, տեղափոխում/ աշխատանքներ:
33. Կատարվել է շինաքարի, ավազի, բեռնափոխադրում Քարագլուխ գյուղի ֆուտբոլի դաշտի համար:
34. Քարագլուխ գյուղի մարգաղաշտի համար կատարվել է ժայռային հատվածի հարթեցում, էքսկավատորային մուրճի օգնությամբ:
35. Վարդահովիտ գյուղում կատարվել է գոգման աշխատանքներ և գեներատորի տեղափոխում:
36. Եղեգիս խոշորացված համայնքում կատարվել է՝ փողոցային լույսերի վերանորոգում:
37. Արտարույնք գյուղում Քառասուն աղբյուրներ կոչվող տարածքում կառուցվել է՝ խոշոր եղջերավոր անասունների համար կացարան:
38. Եղեգիս գյուղում կատարվել է՝ ոռոգման ջրի ակունքի վերանորոգման աշխատանքներ:
39. Աղնջաձոր գյուղում կատարվել է՝ վթարված ջրագծերի հետլիցք, և Բերդաձոր կոչվող հատվածում ոռոգման առվի նորոգման աշխատանքներ:
40. Աղնջաձոր գյուղում կատարվել է՝ գոհվածների պանթեոնի համար շեֆենի տեղափոխման, հարթեցման աշխատանքներ:
41. Աղնջաձոր գյուղում կատարվել է՝ բնակելի թաղամաս տանող ճանապարհի լայնացման, հարթեցման աշխատանքներ:

42. Քարագլուխ գյուղում կատարվել է՝ հին դպրոցի հետնամասի ավելորդ գրունտի քանդում և տեղափոխում ֆուտբոլի մարզադաշտ:
43. Արտաբույնք գյուղում կատարվել է՝ գերեզմանների հարակից տարածքում ջրահեռացման կանալների փորման աշխատանքներ:
44. Արտաբույնք գյուղում կատարվել է ջրահեռացման կանալների փորման աշխատանքներ:
45. Քարագլուխ գյուղում կատարվել է հին դպրոցի հետնամասի մաքրման աշխատանքներ, գրունտի բարձում և տեղափոխում:
46. Քարագլուխ գյուղում ֆուտբոլի մարզադաշտում կատարվել է հողային և ջրագծերի տեղափոխման աշխատանքներ:
47. Շատին գյուղում կատարվել է ջրահեռացման կանալի հետլիցք և գլխավոր ճանապարհին միացնող հարակից ճանապարհի մակերեսային բարեկարգման և մաքրման աշխատանքներ:
48. Քարագլուխ գյուղում էքսկավատորային մուրճով կատարվել է ժայռային հատվածի ջարդման և քարերի հեռացման աշխատանքներ:
49. Քարագլուխ գյուղում կատարվել է Յայլադատեղիից «Թափից» մինչև ջրամբար ընկած հատվածի նորոգման աշխատանքներ:
50. Քարագլուխ գյուղում կատարվել է դեպի գերեզմաններ տանող թեք ճանապարհի շերտնապատման և հարթեցման աշխատանքներ:
51. Շատին գյուղում կատարվել է մահափոսերի փորման աշխատանքներ:
52. Աղնջաձոր գյուղում կատարվել է փողոցային լուսավորության նորոգման և Կալին կոչված տարածքի հարակից ջրագծի փորման աշխատանքներ:
53. Քարագլուխ գյուղում կատարվել է Քալլա և Թուխ Մանուկ տանող ճանապարհների նորոգման աշխատանքներ:
54. Աղնջաձոր գյուղում կատարվել է Կալ տանող ճանապարհի նորոգման աշխատանքներ:
55. Քարագլուխ գյուղում կատարվել է ճանապարհի մակերեսային հարթեցման աշխատանքներ:
56. Թառաթումբ գյուղում կատարվել է՝ գերեզմաններում կառուցվող պանթեոնում հողային աշխատանքներ:
57. Շատին գյուղում Յայլադատեղիում Սողանլու կոչվող տարածքում կատարվել է խմելու ջրագծի փորման և հետլիցքի աշխատանքներ:
58. Քարագլուխ գյուղում Կալերի ներքև կոչվող հատվածում կատարվել է սողանքի հետևանքով փակված ճանապարհի մաքրման և բացման աշխատանքներ:
59. Քարագլուխ և Թառաթումբ գյուղերի սարեր՝ կատարվել է անասնաբույժերի տեղափոխում:
60. Քարագլուխ գյուղում կատարվել է հին դպրոցի հետնամասի մաքրման աշխատանքներ, գրունտի բարձում և տեղափոխում:
61. Ուազ բեռնատարի միջոցով տեղափոխվել է գեներատորը՝ Աղնջաձոր, Քարագլուխ, Թառաթումբ, Շատին, Սալլի, Գողթանիկ և Վարդահովիտ գյուղեր ոռոգման և խմելու ջրագծերի վերանորոգման նպատակով:
62. Կամազ բեռնատարի միջոցով կատարվել է շինանյութի / քար, ավազ/ տեղափոխում Քարագլուխ գյուղի մարզադաշտի տարածքում:
63. Շատին գյուղում կատարվել է ոռոգման ցանցի վերանորոգման աշխատանքներ:
64. Աղնջաձոր գյուղում կատարվել է ոռոգման ջրի բացթողման համակարգի վերանորոգման աշխատանքներ:

2023թ. 3-րդ եռամսյակում կատարված աշխատանքները

65. Շատին գյուղում՝ Ֆելոյի հողամասի տարածքում, կատարվել է գրունտի բարձում, հարթեցում և տեղափոխում, նաև 4-րդ փողոցի փոսալցման, գրունտի հարթեցման աշխատանքներ:

66. Քարագլուխ գյուղում կատարվել է գյուղամիջյան ճանապարհի փոսալցման, շերտնապատման աշխատանքներ:

67. Աղնջաձոր գյուղում կատարվել է սրահի դիմացի բարեկարգման, շինարարական ավելորդ գրունտի բարձման, հեռացման, փողոցներում փոսալցման աշխատանքներ:

68. Քարագլուխ գյուղում կատարվել է մարգագազտի հողային և շինարարական /բարձում, տեղափոխում, հարթեցում/ աշխատանքներ:

69. Թառաթումբ գյուղում՝ «Գոլե» կոչվող հանդամասում, կատարվել է ճանապարհների բարեկարգման և նոր ճանապարհի կառուցման աշխատանքներ:

70. Քարագլուխ գյուղում՝ «Զիլի», «Չատմա», «Վերի յուրդ», «Իման -Արխաջ», «Տանձի ծառ», «Խնձորանոց» կոչվող հատվածներում կատարվել է դաշտամիջյան ճանապարհների բարեկարգման աշխատանքներ:

71. Քարագլուխ գյուղում՝ «Կալեր» կոչվող տարածքի ներքևի հատվածում՝ սահքի գոտում, կատարվել է նոր ճանապարհի կառուցման աշխատանքներ:

72. Աղնջաձոր գյուղում՝ «Ծաղկունք», «Կարմիր քար» կոչվող տարածքներում, կատարվել է դաշտամիջյան ճանապարհների բարեկարգման աշխատանքներ:

73. Քարագլուխ գյուղում կատարվել է խմելու ջրի ակունք տանող ճանապարհի բարեկարգման, ինչպես նաև «Յուրդեր» կոչվող տարածքում ջրագծի վթարված հատվածի վերանորոգման աշխատանքներ:

74. Եղեգիս գյուղում՝ Արևի հյուրատանը հարակից տարածքում, կատարվել է ոռոգման ջրագծի նորոգման աշխատանքներ:

75. Աղնջաձոր գյուղում կատարվել է ներքևի Քարավանատուն տանող ճանապարհի բարեկարգման աշխատանքներ:

76. Աղնջաձոր գյուղում կատարվել է վերևի գերեզմաններ տանող ճանապարհի, նաև «Կալեր» կոչվող տարածքի մոտ ճանապարհի թեք հատվածի նորոգման աշխատանքներ:

77. Թառաթումբ գյուղում կատարվել է գյուղ տանող ճանապարհի /տրանսֆորմատորի հատվածում/ լայնացման, գրունտի հեռացման աշխատանքներ:

78. Թառաթումբ գյուղում կատարվել է Թափեր տանող ճանապարհի շերտնապատման, և դպրոց տանող ճանապարհի փոսալցման ու շերտնապատման աշխատանքներ:

79. Աղնջաձոր գյուղում կատարվել է գետի կամրջին զուգահեռ ճանապարհի կառուցում:

80. Աղնջաձոր գյուղում՝ «Խաչքարեր» կոչվող հանդամասում, կատարվել է ոռոգման ջրագծի խցանված հատվածի վերանորոգման աշխատանքներ:

81. Շատին գյուղում կատարվել է գյուղամիջյան փողոցի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ:

82. Հերմոն գյուղում կատարվել է գյուղամիջյան փողոցի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ:

83. Քարագլուխ գյուղում՝ կանգառի հարակից հատվածում, կատարվել է աղբանոցի հարթեցում և մաքրում:

84. Սալլի գյուղում՝ «Ծիրանանոց» կոչվող հանդամասի դիմացի հատվածում, կատարվել է սահքի հետևանքով փակված ճանապարհի մաքրում:

85. Արտաբույնք գյուղում կատարվել է գյուղամիջյան փողոցների խճապատում:

86. Հորս-Աղավնաձոր գյուղերի հատվածում կատարվել է հրդեհի մարման աշխատանքներ:

87. Քարազլուխ գյուղում կատարվել է մարզադաշտի կառուցման աշխատանքներ:

88. Աղնջաձոր գյուղում «Արջաձոր» կոչվող հատվածում կատարվել է ոռոգման ջրի ակունքի մաքրման աշխատանքներ:

89. Սալլի գյուղում կատարվել է դեպի «Բայալու» կոչվող հանդամասի ճանապարհի դրենաժային կանալի փորում, ճահճացող ճանապարհի բարեկարգում, և դեպի Արտաբույնք գյուղ տանող առվի փորում:

90. Աղնջաձոր գյուղում կատարվել է կենտրոնական առվի ակունքի մաքրման աշխատանքներ:

91. Հորս գյուղում կատարվել է լիճ տանող ճանապարհի հարակից առվի մաքրում /100մ/:

92. Շատին գյուղում կատարվել է ներքևի գերեզմաններին հարակից՝ դեպի ՀԷԿ տանող ճանապարհի, և հարակից առուների նորոգման աշխատանքներ:

93. Քարազլուխ գյուղում կատարվել է գյուղամիջյան, և դեպի պանթեոն տանող ճանապարհների բարեկարգման աշխատանքներ:

94. Քարազլուխ գյուղում կատարվել է մարզադաշտի հարակից ոռոգման առվի կառուցում՝ կիսախողովակների տեղադրման նպատակով:

95. Թառաթումբ գյուղում կատարվել է այգիներ տանող ճանապարհի բարեկարգման, փոսալցման և հախթեցման աշխատանքներ:

96. Քարազլուխ գյուղում կատարվել է մարզադաշտի տրիբունայի կառուցման աշխատանքներ:

97. Սալլի գյուղում կատարվել է «Իմանի» ձոր կոչվող հատվածում, վարելահողեր տանող ճանապարհի բարեկարգում:

98. Շատին գյուղում կատարվել է մանկապարտեզի համար նախատեսված հատվածում ֆոտովոլտային կայանի համար նախատեսված տարածքի հարթեցում:

2023թ. 4-րդ եռամսյակում կատարված աշխատանքները

99. Քարազլուխ գյուղում կատարվել է գյուղամիջյան փողոցների բարեկարգման աշխատանքներ:

100. Սալլի, Թառաթումբ և Քարազլուխ գյուղերում կատարվել է աղացած ասֆալտով ճանապարհների բարեկարգման աշխատանքներ:

101. Թառաթումբ գյուղում՝ «Չարմա» կոչվող հանդամասում, կատարվել է ոռոգման ջրագծի վերանորոգման աշխատանքներ:

102. Աղնջաձոր գյուղում կատարվել է ջրամբարի մատակարարման համակարգի վերանորոգում:

103. Քարազլուխ գյուղում կատարվել է պանթեոնի ցայտադբյուրի խմելու ջրի մատակարարման համար փորման, փոսալցման աշխատանքներ:

104. Աղնջաձոր գյուղում կատարվել է ջրամբարի ջրհավաք աշխատանքներ:

105. Աղնջաձոր գյուղում կատարվել է աղացած ասֆալտով ճանապարհների բարեկարգման աշխատանքներ:

106. Շատին գյուղում կատարվել է ճանապարհաեզրային աղբանոցի հողածածկում:

107. Սալլի գյուղի ներքևի հատվածի դիմացի լանջից՝ սահքի հետևանքով փակված ճանապարհի մաքրում:

ՍՈՒԲՎԵՆՅՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

108. ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Թառաթումբ, Քարագլուխ, Աղնջաձոր, Հերմոն, Հորբատեղ, Գողթանիկ, Հորս և Եղեգիս բնակավայրերի ոռոգման առունների վերանորոգում:

109. Եղեգիս համայնքի Վարդահովիտ բնակավայրի խմելու ջրի արտաքին ցանցի վերակառուցում և Սալի, Հորս, Գողթանիկ բնակավայրերի խմելու ջրագծերի կառուցում:

110. Եղեգիս համայնքի Շատին, Աղնջաձոր, Թառաթումբ, Քարագլուխ և Արտաբույնք բնակավայրերի փողոցային լուսավորության ցանցի կառուցում:

ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆ

«Հայաստանի կենդանի լանդշաֆտները շուկայի զարգացման համար

111. Եղեգիս համայնքի Շատին գյուղում տեղադրվել է «Շատին արևային կայան» /40 ԿՎտ հզորությամբ ֆոտովոլտային համակարգ: Ծրագիրը իրականացվել է Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը՝ Եղեգիսի համայնքապետարանի, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության ֆինանսական աջակցությամբ, WWF-Հայաստանի և ՌԶԳ ՀԿ-ի կողմից, «Հայաստանի կենդանի լանդշաֆտները շուկայի զարգացման համար» ծրագրի շրջանակներում:

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

«Լավ Կառավարում Հանուն Տեղական Զարգացման Հարավային Կովկասում»

112. Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Լավ Կառավարում Հանուն Տեղական Զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով ՀՀ համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային ծրագրը:

1. Եղեգիս համայնքի Աղնջաձոր գյուղում 520մ² 159մ² ջրագիծ, կառուցված ոռոգման ջրագծով ոռոգվելու է շուրջ 132 տնտեսությունների տնամերձ հողամասերը և այգիները:

2. Եղեգիս համայնքի Շատին գյուղում 140մ² 159մ² խողովակ, որը կառուցվել է Շատին բնակավայրի երկու տարբեր հանվածներում 40մ և 100մ չափերով, ջրագծով ոռոգվելու է շուրջ 70 տնտեսությունների տնամերձ հողամասերը և այգիները:

«Երիտասարդները հանուն բարենպաստ կլիմայի»

113. Արտաբույնքի երիտասարդական կենտրոնի վերանորոգման ու կահավորման ծրագիրն իրականացվելու համար ենթադրամաշնորհը տրվել է «Սյունիք-Զարգացում» համայնքային ՀԿ «Երիտասարդները հանուն բարենպաստ կլիմայի» ծրագրի շրջանակներում և այն իրականացվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի՝ «Երիտասարդները հանուն բարենպաստ կլիմայի» ծրագրի շրջանակում Ավստրիական զարգացման գործակալության (ԱԶԳ) ֆինանսավորմամբ և «Սյունիք-Զարգացում» համայնքային ՀԿ-ի հետ համագործակցությամբ:

Աղնջաձորի մշակույթի տան վերանորոգում

114. Աղնջաձորի մշակույթի տան վերանորոգումը իրականացվել է «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից:

Վար ու ցանք 97 հեկտար

115. Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն հիմնադրամի կողմից իրականացվել է վար ու ցանք 97 հեկտար:

Կազմող՝ համայնքի տնօրինի և տնտեսական զարգացման պատասխանատու

Շուշանիկ Դանիելյան

Էլեկտրոնային փոստ shushan.danielyan96@mail.ru կամ shushanik.danielyan96@gmail.com

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՄԱՐԺՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց Ձորի մարզ, հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am, էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02-ը փետրվարի 2024 թվականի N 10 Լ,

**ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24/10/2019Թ. ԹԻՎ 72Ն ԵՎ 08/12/2022Թ. ԹԻՎ 136Ա
ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ՀԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթները

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Ուժը կորցրած ճանաչել Եղեգիս համայնքի ավագանու 24/10/2019թ. «Եղեգիս համայնքի ավագանու 14/12/2017թ. թիվ 29Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու, Եղեգիս համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 72Ն որոշումը:

2. Ուժը կորցրած ճանաչել Եղեգիս համայնքի ավագանու 08/12/2022թ. «Ձուլված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով հանձնաժողով ստեղծելու և Եղեգիս համայնքի ավագանու 31-ը օգոստոսի 2018 թվականի թիվ 57Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 136 որոշումը:

3. Սահմանել Եղեգիս համայնքի կամավոր խնդիրների լուծման և սոցիալական աջակցության տրամադրման չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ՝ 9
Ստեփանյան Արթուր

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 9

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 0

Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա **բացակա**
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե **բացակա**
Հարությունյան Կարեն **բացակա**
Միքայելյան Քրիստինա **բացակա**
Ստեփանյան Սաշա **բացակա**
Սմբատյան Արսեն **բացակա**
Սմբատյան Մամիկոն

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԱՎԱՐՈՒ



ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

**ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ****1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով (չափորոշիչներ) սահմանվում են Եղեգիս համայնքում (այսուհետ՝ համայնք) սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման հետ կապված հիմնադրույթները և կարգավորումները, մասնավորապես՝ սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն (այսուհետ՝ աջակցություն) ցուցաբերելու կարգավորումները, աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու համար համայնքի ղեկավարի կողմից մշտական գործող հանձնաժողով ստեղծելու պայմանները և գործունեության ընթացակարգը, աջակցություն ստանալու համար դիմած անձի (ընտանիքի) կարիքների գնահատման չափորոշիչները և դրանց համապատասխան միավորները, ընտանիքի կարիքների գնահատման թերթիկի ձևը և սոցիալական աջակցություն տրամադրելու մասին դիմումի ձևը:

2. Համայնքի ղեկավարը ստեղծում է համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

3. Հանձնաժողովում ընդգրկվում են՝

1) **համայնքի ավագանու մինչև երեք անդամ,**

2) համայնքային ոչ առևտրային կազմակերպություններից **մինչև երկու անդամ,**

3) համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աշխատող (աշխատողներ),

4) համայնքապետարանի աշխատակազմից **մինչև երեք աշխատող:**

4. Հանձնաժողովում կարող են ընդգրկվել այդպիսի ցանկություն հայտնաձև՝ համայնքի բնակիչ հանդիսացող շահագրգիռ քաղաքացիական հասարակության **մինչև երեք** ներկայացուցիչներ:

5. Հանձնաժողովի ձևավորման մասին հայտարարությունը՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից տեղադրվում է համայնքի պաշտոնական կայքում և փակցվում է համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում:

6. Սույն կարգի 5-րդ կետով նախատեսված հայտարարությունը հրապարակվելուց հետո 10 օրվա ընթացքում Հանձնաժողովի կազմում ընդգրկվելու ցանկություն ունեցող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են դիմել համայնքապետարանի աշխատակազմ:

7. Սույն կարգի 6-րդ կետում նշված ժամկետը բաց թողնելուց հետո, ստացված դիմումները համայնքապետարանի կողմից ենթակա չեն ընդունման և քննարկման:

8. Համայնքի ղեկավարը հանձնաժողովի կազմից նշանակում է նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար: Նախագահի տեղակալը փոխարինում է նախագահին՝ նրա բացակայության ժամանակ:

9. Հանձնաժողովի նախագահը նշանակվում է ռոտացիոն կարգով՝ նշանակվելու պահից մեկ տարի ժամկետով:

10. Հանձնաժողովի քարտուղար է նշանակվում համայնքի սոցիալական աշխատողը:

11. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է սույն կարգով սահմանված ընթացակարգերին համապատասխան:

12. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են քննարկումների միջոցով, որոնց արդյունքում կայացվում են իրավիճակային լուծումներ պահանջող որոշումներ և կազմվում եզրակացություններ:

13. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները և համայնքային ոչ առևտրային **կազմակերպությունների տնօրենները՝ անհրաժեշտության դեպքում**, յուրաքանչյուրն իր գործառույթների շրջանակներում, պարտավոր են աջակցել հանձնաժողովի աշխատանքներին:

II. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

14. Աջակցությունից օգտվելու նպատակով համայնքի ղեկավարին կարող են դիմել.

1) համայնքի բնակիչները,

2) համայնքում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները,

3) շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները:

15. Դիմումը (Ձև 2) ներկայացվում է համայնքապետարանի աշխատակազմի աշխատակցին անձամբ կամ լիազորված անձի միջոցով (լիազորագիրը կցվում է դիմումին):

16. Էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված դիմումը հնարավոր է ուղարկել նաև համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային փոստի կամ համայնքապետարանի պաշտոնական կայքի միջոցով: Դիմումի հետ ներկայացվում են ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը (փաստաթղթերի մասին տեղեկատվությունն ու ձևաթղթերը տեղադրված են համայնքապետարանի պաշտոնական կայքի ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր բաժնում):

17. Դիմումին կամ գրությանը կցվում են սոցիալական վիճակը հավաստող հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը,

2) դիմումատուի սոցիալական քարտի կամ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքի բնօրինակը,

3) տեղեկանք դիմումատուի բնակության վայրից՝ ընտանիքի կազմի մասին,

4) բժշկասոցիալական փորձաքննական որոշումը, որը փաստում է 1-ին, 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամության վերաբերյալ կամ հաշմանդամության վկայականը,

5) բժշկական հաստատությունից տեղեկանք հիվանդության մասին կամ քաղվածք ամբուլատոր քարտից,

6) սոցիալական անապահով վիճակը հիմնավորող փաստաթուղթը՝ տրված սոցիալական աջակցության տարածքային գործակալության կողմից,

7) կյանքի դժվարին իրավիճակում գտնվելու հանգամանքը հավաստող փաստերը հիմնավորող փաստաթղթեր (դժբախտ պատահար, ընտանիքի անդամի կորուստ, բնական կամ տեխնոժին աղետի պատճառած վնաս և՛ այլ),

8) տեղեկանք համայնքային բյուջեի նկատմամբ ժամկետանց պարտավորությունների բացակայության վերաբերյալ,

9) էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու դեպքում՝ դիմումին կամ գրության կցվում են սույն մասում ներկայացված փաստաթղթերի սքանավորված տարբերակները:

18. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները պատճենահանում է, դրանց վրա կատարում է գրառում բնօրինակների հետ համապատասխանության մասին և փաստաթղթերի բնօրինակները վերադարձնում է դիմումատուին: Սույն մասը չի տարածվում էլեկտրոնային կարգով ներկայացված դիմումների վրա:

Անհրաժեշտության դեպքում վերցվում են փաստաթղթերի բնօրինակները:

19. Փաստաթղթերի փաթեթը համայնքապետարանի համապատասխան աշխատակցի կողմից հանձնվում է սոցիալական աջակցության հարցերը քննարկող հանձնաժողովին:

20. Դիմումները կամ գրությունները՝ ստանալուց հետո մեկ շաբաթյա ժամկետում, հանձնաժողովի քարտուղարը դրանք ներկայացնում է հանձնաժողովի նախնական քննարկմանը:

21. Նախնական քննարկման արդյունքում յուրաքանչյուր դիմումին կամ գրությանը տրվում է համապատասխան ընթացք:

22. Հանձնաժողովը իրականացնում է հետազոտություն (տնային այցելություն) և կազմում դիմումատուի սոցիալական կարիքների գնահատման ակտ:

23. Հրավիրվում է հանձնաժողովի նիստ, որին կարող է մասնակցել դիմումատուն:

24. Հանձնաժողովի տված եզրակացության հիման վրա համայնքի ավագանու կողմից կայացվում է սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշում կամ գրավոր մերժվում է սոցիալական աջակցության ծառայության տրամադրումը:

25. Համայնքում սոցիալական աջակցության տրամադրման յուրաքանչյուր գործընթաց կազմակերպվում և իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարչական վարույթի շրջանակներում:

26. Սոցիալական աջակցություն ստանալու վերաբերյալ դիմումները քննարկվում և դրանց վերաբերյալ որոշումները ընդունվում են 30 աշխատանքային օրվա ընթացքում:

27. Այն անձինք, ովքեր համայնքի ղեկավարի ավագանու անդամի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպության աշխատակից հանդիսացող անձանց հետ համատեղ տնտեսություն են վարում՝ չեն կարող օգտվել սույն կարգով սահմանված աջակցությունից:

III. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

28. Տունայց կատարելու նպատակով հանձնաժողովը ձևավորում է աշխատանքային խումբ և կազմում ժամանակացույց, որից հետո իրականացվում է դիմումատուի ընտանիքի կյանքի պայմանների ուսումնասիրություն:

29. Աշխատանքային խումբը այցելում է դիմողի ընտանիք, կատարում ընտանիքի կարիքների գնահատում և լրացնում գնահատման թերթիկը (Ձև 1):

30. Անհրաժեշտության դեպքում կարող է իրականացվել կրկնակի այցելություն:

31. Ուսումնասիրության ժամանակ մասնագիտական օժանդակություն ցուցաբերելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում հանձնաժողովը կարող է հրավիրել համապատասխան մասնագետների (բժիշկ, հոգեբան և այլն):

32. Ընտանիքի գնահատման թերթիկը՝ տունայց կատարելու օրվանից եռօրյա ժամկետում, աշխատանքային խմբի կողմից ներկայացվում է հանձնաժողովի քարտուղարին:

33. Ներկայացված գնահատման թերթիկները քննարկվում են հանձնաժողովի նիստում:

34. Քննարկման արդյունքներով հանձնաժողովը կազմում է եզրակացություն, որը ստորագրում են հանձնաժողովի անդամները:

35. Հանձնաժողովի նախագահը եզրակացությունը ներկայացնում է համայնքի ղեկավարին՝ համայնքի ավագանու քննարկմանը ներկայացնելու և աջակցություն ցուցաբերելու կամ մերժելու վերջնական որոշում կայացնելու նպատակով:

36. Համայնքի ավագանին որոշումը կայացնում է եզրակացությունը ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան դիմումը ստանալու օրվանից 30 աշխատանքային օրվա ընթացքում:

37. Հրատապ լուծում պահանջող և անհապաղ աջակցության անհրաժեշտության վերաբերյալ դիմումների քննարկումն իրականացվում է արագացված ընթացակարգով՝ սոցիալական աշխատողի հատուկ եզրակացության հիման վրա, հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ,

համայնքի ղեկավարի անմիջական հսկողությամբ և ավագանու կողմից արտահերթ նիստում որոշումների կայացման միջոցով:

IV. ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

38. Ընտանիքի կարիքների գնահատումը կատարվում է միավորային համակարգով՝ ելնելով հետևյալ չափորոշիչներից.

- 1) նպաստառու ընտանիք - 1 միավոր,
- 2) միայնակ մայր - 1 միավոր,
- 3) ամուսնալուծված ծնողի խնամքին գտնվող երեխա - 1 միավոր,
- 4) բազմազավակ (չորս և ավելի երեխա ունեցող) ընտանիք - 1 միավոր,
- 5) պարտադիր ժամկետային զինծառայող ունեցող ընտանիք (յուրաքանչյուրին) - 2 միավոր (1 միավոր՝ պոտենցիալ ֆինանսական աղքատի բացակայություն, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
- 6) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող և (կամ) հաշմանդամ երեխա ունեցող ընտանիք (յուրաքանչյուրին) - 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
- 7) վարձով կամ ոչ հիմնական շինությունում կամ 3-րդ կամ 4-րդ կարգի վթարային ճանաչված շենքում բնակվող ընտանիք - 3 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ անհրաժեշտ գույքի բացակայություն, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
- 8) արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետ) տուժած ընտանիք - 3 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ անհրաժեշտ գույքի բացակայություն, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
- 9) դիմելու օրվան նախորդող երեք ամսվա ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպք - 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
- 10) հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (անհետ կորած) կամ հաշմանդամություն ստացած անձի ընտանիք - 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
- 11) միայնակ չաշխատող թոշակառու - 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
- 12) միակողմանի ծնողազուրկ երեխա ունեցող ընտանիք - 1 միավոր,
- 13) հղի կին ունեցող ընտանիք - 1 միավոր
- 14) անբարենպաստ այլ պայմաններ - 1-ից 5 միավոր (հիմնավորվում է լրացուցիչ տեղեկատվությամբ և մասնագետի դիտարկումներով):

39. Աջակցությունը ցուցաբերվում է նվազագույն 5 միավոր ստանալու դեպքում: Աջակցության գումարի չափի մասին գրավոր նշվում է հանձնաժողովի եզրակացության մեջ, որը կարող է փոփոխվել համայնքի ավագանու կողմից համապատասխան որոշում ընդունելիս:

40. Յուրաքանչյուր ընտանիք սոցիալական աջակցությունից կարող է օգտվել տարեկան 1 (մեկ) անգամ: **Բացառիկ դեպքերում՝ 2 (երկու) անգամ:**

41. Սոցիալական աջակցության առավելագույն գումար է հանդիսանում 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամը:

